

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ...

Հարցե՛ք հողջունն՝ երուսաղեմի,
 Եւ գշինութենէ՝ ոյ՛ք սիրե՛ք զՏէ՛ր
 Մաղմուս

Ոչ ոք գիտէ ե՞րբ շինուած կամ քանի՞ անգամ
 Հողին եղած էս հաւասար: Վերաշինուած՝
 Բայց կործանուած կրկին ձեռքէ մը անըզգաս,
 Մինչեւ որ քեզ այցի եկած է Մարդ-Ոստոյն:

Մարդիկ քեզ սո՛ւրբ կը կոչեն եւ «Քաղաք Դաւթի»,
 Սուրբ՝ ոչ օդիդ, ջուրիդ համար կամ երկնքիդ,
 Ուրկէ օր մը Տեսիլք մ'իջաւ — Ոստումաճորդի՛—,
 Արշալուստւած նոր հորհուրդով մ'երկնաժպիտ:

Իջաւ եւ ըզքեզ սրբացուց, ըրաւ տեղի՝
 Եւ բնակարան աստուածային սուրբ խորհրդոց:
 Հին դարերու մաքրեց մեղքելիդ, երբ աղտեղի
 Սարերուդ վրայ տեսիլքներու վառեց հրնոց:

Եւ օր մը այդ տեսիլքներով հրաշագինուած՝
 Երկինք դարձաւ, իր փառքերուն հայրենական:
 Անկէ նորէն, ո՛վ սքանչելիք, վըրադ դողա՛ց,
 Ներհակաբար նենգ Համբարիդ սեւ գիշերուան:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԻԱՆ